

ՃԾԶ.

Վիեննական Հարց « ՅՈՒՇԱՐՁԱՆ »-ի այն էջը (3), ուր Միխրարեան տիտղոսին շուրջ յերկրուածոյ պատմութեան հիմնական սրբագրութիւնն ըրինք, կու տայ մեզ դեռ ուրիշ ամենակարեւոր հարց մը. հիմայ կարգն է՝ որ այդ ալ գտնէ իւր արժանաւոր լուսարանութիւնը, քանի որ մեր վաւերաթուղթերու շարքը զայս կը բերէ:

Նախ պէտք է գիտնալ, թէ հետեւեալ թուղթին ստորագրողը Նիկողայոս Լերգար՝ Հաւատոյ Տարածման Ս. Ժողովի Քարտուղարն է, որ կարևոր հարցումներ կ'ընէ Հայ Միսական գրեթէ մասին. գոյութիւն ունենալով այս շրջանին՝ Հայ ծէսը լատինականէն բոլորովին զտելու տեսակէտ մը:

Սոյն նամակին մէջ՝ իր գլխաւոր նիւթէն զատ՝ կայ նաև խիստ նշանակելի կէտ մը յանձին Գերջ. Մելգոնեան Աբրահօր, առ որ այսպէս կ'ըսէ Մոնս. Լերգար. « Alle quali Ella degnamente presiede » (« որոց [Ս. Ղազարու Հարց] ինքնդ արժանապէս նախարագմեալ է »): Ս'էջ դնել, որ թուղթս գրուած է 1751 Գեկտ. 18-ին:

Բայց տեսնենք ինչ կը գրեն Վիեննական Հարց « Ակեարկ մը Վիեննական Միխրարեան Միարևուտեան Հարիւրամեայ գործունեութեան վրայ » վերնագրին տակ. « Միխիթարայ մահուրէն տարի մ'ետքը ընդհանուր ժողովով (6 Ապրիլ 1750) կ'ընէ « տրուի Միարանութեան ընդհ. Աբրայ՝ Հ. Ստեփանոս Վ. Մելգոնեան:

« Մելգոնեան իր ընտրութենէն քիչ ետքը ձեռնամուխ կ'ըլլայ երանաշնորհ « Հիմնադրին սահմանած կարգերը փոփոխել. սակայն իւր այս նորաձեւութիւններով « յառաջ կը բերէ երկցագոյն միանձանց մէջ դժգոհութիւն: Եօթը տարի կը հետապնդէ ի զուր իւր կազմած Սահմանադրութիւնը Հոռոմ հաստատել տալ, մինչև « որ օր աւուր աճող դժգոհութիւնը կը ստիպէ միարանները՝ ընդհանուր ժողով մը « գումարել, 1772 Մայիս 25-ին կը բացուի ժողովը. ուր կը հրաւիրուի նաև Աբրահայր (տակաւի յնաստատուած Հոռոմէն¹)...»: Կանգ կ'առնենք հոս:

Չանց ընելով մի առ մի հերքումը անհիմն մէջբերումիս՝ որ կը մաքառի յայտնի ճշմարտութեան դէմ՝ կը բաւականանանք ըսել, թէ կարելի չէ չտեսնել մասնաւոր թագուն դիտարութիւն մը նկատմամբ փակագծեալին՝ զոր մենք ընդգծեցինք:

Չենք վարանիր ըսելու, թէ յիշուի Վիեննական Հարց ծայրագոյն յանդգնութիւն մ'ըրած են, յայտարարելով զՄելգոնեան Աբրահայր իր ընտրութեան թուականէն (1750 Ապրիլ 6) մինչև 1772 Մայիս 25 իրրև « տակաւի յնաստատուած Հոռոմէն ». այսինքն թէ Մելգոնեանի արքայութեան շրջանի առաջին 22 տարիներու վաւերական և օրինաւոր իշխանութիւնը յայտնապէս իրեն զլանալէ վերջ՝ տարակոյսի տակ կը թողուն 1772-ի յաջորդող տարիներէն դեռ մաս մը ևս, այդ ամբողջ ժամանակամիջոցին մէջ դեռ Ս. Աթոռէն չհաստատուած նկատելով:

Գիտուար չէ իմանալ անշուշտ այդ առեղծուածային շրջանին մէջ լոկ իրենց մէկ արդարացումը հետապնդելու զուր ջանքը:

Ճշմարտութիւնը երևան հանելու և միանգամայն ներկայ Միխիթարեան սերունդէս որդիական յարգանք մը մատուցանելու համար հանդէպ Միխիթարայ Լուսահոգի Յաջորդին՝ կը թուենք հոս կարգ մը հեղինակաւոր վկայութիւններ, որոնք ջախջախիչ փաստեր են Վիեննական Մեծյ. Հարց տուած սին վճռոյն դէմ:

1. — Վատիկանու Գիւանապետը մեծանուն Giuseppe Assemani, Հոռովմէն 1751 փետր. 26 թուակիր թուղթ մը կը զրկէ առ Մելգոնեան, կոչելով զանիկայ

1. Անդ, էջ 3-4.